



Սույն արբիտրաժային գործ թիվ 6-ը մշակվել է «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակներում: Ծրագրի այս մասը ֆինանսավորվում է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության կողմից և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից: Սույն գործի մեջ արտահայտված կարծիքները հեղինակին են և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի և/կամ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության դիրքորոշումը: Սույն արբիտրաժային գործ թիվ 6-ը մշակվել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի մեդիացիոն և արբիտրաժային կլինիկայի կողմից:

Արբիտրաժ խաղ-մրցույթը ֆինանսավորվում է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Իրավագիտության մագիստրոսական ծրագրի և «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի կողմից: Խաղ-մրցույթի գործը պատրաստվել է Իրավագիտության մագիստրոսական ծրագրի Մեդիացիոն և Արբիտրաժային Կլինիկայի կողմից բացառապես մրցույթի անցկացման և կրթական նպատակներով. այն չի ներկայացնում ՀԱՀ որևէ տեսակետ, կարծիք կամ դիրքորոշում: Խաղ-մրցույթի գործը հիմնված չէ ՀՀ-ում իրականացված որևէ դատական կամ արբիտրաժային իրական գործի տվյալների կամ հանգամանքների վրա:

ԱՐԲԻՏՐԱՅԻՆ ԳՈՐԾ ԹԻՎ 6

«Վարագ» ՍՊԸ

Ընդդեմ

Ստար Մայնինգ Լիմիթը

1- Ստար Մայնինգ Լիմիթը-ը («Ստար») Ամերիկայի Միացյալ Նահանգների Տեխաս Նահանգում գրանցված ընկերություն է, որն զբաղվում է արժեքավոր մետաղների արդյունահանմամբ և հանքանյութի վաճառքով: Ընկերությունն ունի ավելի քան 50 տարվա պատմություն և այժմ աշխատանք է ծավալում առավել քան 15 պետություններում: Այդ աշխատանքները ներառում են ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն, հանքի կառուցում, օգտակար հանածոների հանքանյութի արդյունահանում, հանքանյութի մշակում, խտանյութի և մետաղական ձուլվածքների արտադրություն և վաճառք:

2- «Վարագ» ՍՊԸ-ն («Վարագ») Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում գրանցված ընկերություն է, որն ընդերքօգտագործման ոլորտում տարիների աշխատանքային փորձ ունի ՀՀ-ում: Այն զբաղվում է ՀՀ-ի տարբեր շրջանների ընդերքի երկրաբանական ուսումնասիրությամբ և օգտակար հանածոների պաշարների տեղը ճշգրտելով: Վարագը տեղական կամ օտարերկրյա ներդրողների հետ համատեղ նաև զբաղվում է օգտակար հանածոների արդյունահանմամբ:

3- Վարագի տնօրենն ու Ստարի արտաքին ներդրումների գծով փոխտնօրենը հանդիպել են Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերության ոլորտի մասին 2015 թվականին Երևանում կազմակերպված սեմինարի ընթացքում, ու նախնական բանավոր պայմանավորվածության հասել հետագայում իրար հետ համագործակցելու վերաբերյալ:

4- Վարագը, նախապես ստացած լինելով ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության («Նախարարություն») նախնական համաձայնությունը Սյունիքի մարզում հավանական օգտակար հանածոների պաշարներ գտնելու նպատակով երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու կապակցությամբ, 2016 թվականի ամռանը Սյունիքի

մարզում կատարած իր ուսումնասիրությունների արդյունքում ճշգրտում է օգտակար հանաճոններով հարուստ մի տարածք, որտեղ մեծ հավանականությամբ կան ոսկու և պղնձի պաշարներ, սակայն մետաղային օգտակար հանաճոնների պաշարները բավականին խորքում են տեղակայված և առանց հավելյալ առավել խորքային երկրաբանական ուսումնասիրությունների հնարավոր չէ պարզել դրանց քանակը և արդյունահանման նպատակահարմարությունը, իսկ առանց ժամանակակից տեխնոլոգիաների ու սարքավորումների օգտագործման հնարավոր չի լինի հանք կառուցել և շահագործել: Որպես հավելյալ խոչնդոտ՝ երկրաբանական ուսումնասիրություն անցած տարածքում դեռևս կարող են կրցախյան պատերազմից մնացած լինել չվնասագերծված ականներ կամ չպայթած արկեր, որոնք կարող են արգելք հանդիսանալ ապահով տեղաշարժման, հետագա երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանաճոնների արդյունահանման աշխատանքների համար:

5- Վարագը նշված երկրաբանական ուսումնասիրություն անցած տարածքի առավել մանրամասն ուսումնասիրության համար 2016 թվականի սեպտեմբեր 1-ին իր ուսումնասիրությունների նախնական գեկույցը ներկայացնում է Նախարարությանը և Նախարարությունից ստանում 6 սեպտեմբեր 2016 թվականի նախնական սկզբունքային համաձայնություն տարածքն ավելի մանրամասն ուսումնասիրելու և ընդերքի շահագործման կապակցությամբ իր նախագիծը մշակելու և այն Նախարարությանը ներկայացնելու մասին: Հիշյալ նամակում նշված է, որ այն ընդերքօգտագործման թույլտվություն կամ արտոնություն չի ներկայացնում և որ ընդերքօգտագործման թույլտվությունը պայմանավորված է հետևյալով՝

- (1) Վարագը 3 ամսվա ընթացքում Նախարարությանը կներկայացնի օգտակար հանաճոնների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության մանրամասն աշխատանքային ծրագիր,
- (2) Վարագը 3 ամսվա ընթացքում Նախարարությանը կներկայացնի օգտակար հանաճոնների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման նախագծերի ֆինանսավորման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն և Նախարարության համար ընդունելի ծրագիր,
- (3) Եթե Վարագը նախատեսում է ունենալ օտարերկրյա գործընկեր, այդ գործընկերոջ անունն ու մանրամասն տեղեկությունները նրա աշխատանքային անցյալի, առաջարկած համագործակցության տեսակի, պայմանների և սահմանների մասին,
- (4) Մանրամասն և Նախարարության համար ընդունելի ծրագիր շրջակա միջավայրի պահպանման և շրջանի բնակավայրերի բարեկարգման մասին, և
- (5) Նախարարությունը իր վերջնական թույլտվությունը կարող է տալ միայն մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի: Եթե Վարագը նախատեսում է երկրաբանական ուսումնասիրություններն ու ընդերքօգտագործման աշխատանքները իրականացնել այլ գործընկերոջ հետ համատեղ, ապա բոլոր պաշտոնական դիմումները Նախարարության պետք է տրվեն համատեղ հիմնադրված ընկերության կողմից:

6- Վարագը, ստանալով Նախարարության նախնական սկզբունքային համաձայնությունը, իր 17 հոկտեմբեր 2016 թվականի նամակով դիմում է Ստարին և իր գրությանը կից ներկայացնելով արված ուսումնասիրությունների արդյունքը՝ Ստարից հարցնում, թե արդյոք այն հետաքրքրված է նշված ընդերքի ավելի մանրամասն երկրաբանական ուսումնասիրությամբ ու հանքը շահագործելու ծրագրով, և հետաքրքրության դեպքում խնդրում ներկայացնել այս ծրագրի կապակցությամբ իր առաջարկներն ու պայմանները Վարագի հետ համագործակցելու, ներառյալ ծրագիրը ֆինանսավորելու մասին:

7- Ստարը Վարագին ուղղված իր 21 հոկտեմբեր 2016 թվականի գրությամբ հաստատում է իր հետաքրքրությունը և տեղեկացնում, որ մեկ ամսվա ընթացքում կներկայացնի իր ծրագիրն ու առաջարկները:

8- 15 նոյեմբեր 2016 թվականին Ստարը իր գրավոր առաջարկն ու ծրագիրն է ներկայացնում Վարագին ըստ հետևյալի՝

(1) Ստարը պատրաստ է համագործակցել Վարագի հետ ընդերքի տեղամասի մանրամասն երկրաբանական ուսումնասիրության և եթե ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվի ոսկու արդյունահանման համար բավարար պաշար, ապա հանքի կառուցման և շահագործման համար:

(2) Ծրագիրն իրականացնելու համար Ստարը առաջարկում է Հայաստանի Հանրապետությունում Վարագի հետ միատեղ հիմնադրել ընկերություն («**Համատեղ Ընկերություն**»), ուր Ստարի մասնաբաժինը կլինի 70, իսկ Վարագինը՝ 30 տոկոս: Համատեղ Ընկերության հիմնադրման կապիտալի համար Ստարը առաջարկում է 1,000,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

(3) Ստարը կֆինանսավորի երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքները, որի համար պատրաստ է մինչև 5,000,000 ԱՄՆ դոլար հատկացնել:

(4) Եթե երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում հայտնագործվի Ստարի համար ընդունելի պաշարով ոսկու հանք, Ստարը նաև պատրաստ է ֆինանսավորել հանքի կառուցումն ու ընդերքօգտագործման աշխատանքները, հանքանյութի արդյունահանումը, մշակումը և խտանյութը վաճառքի համար պատրաստ վիճակի հասցնելը:

(5) Ստարը պատրաստ է վերոնշյալ աշխատանքների համար հատկացնել մինչև 15,000,000 ԱՄՆ դոլար:

(6) 3-րդ և 5-րդ ենթաբաժիններում նախատեսված ներդրումների վերջնական գումարը Ստարին կվերադարձվի Ստարին վճարելով արդյունահանված ոսկու խտանյութի յուրաքանչյուր մասնաբաժնի վաճառքի գնի 70 տոկոսը գումարած 5 տոկոս որպես գործակալական վարձատրություն՝ ըստ 7-րդ կետի:

(7) 6-րդ ենթաբաժնում նախատեսված վաճառքի 70 տոկոսի և գործակալական վարձատրության վճարումը կշարունակվի մինչև Ստարի կողմից ներդրված ամբողջ գումարի վերադարձը, առավելագույնը 15 տարի՝ ոսկու խտանյութի առաջին վաճառքի պահից սկսած:

(8) Ստարը պատրաստ է վաճառքի համար պատրաստ ոսկու խտանյութը վաճառելու համար կատարել անհրաժեշտ մարքեթինգային և միջնորդական գործողությունները որի դիմաց այն ակնկալում է ստանալ վաճառքի հասույթի գումարի 5 տոկոսը որպես գործակալական վճար:

(9) Եթե ուսումնասիրությունների արդյունքում գտնվի ոսկու պաշար, որի չափը սակայն ընդունելի չէ Ստարի համար, Ստարի գրավոր պահանջի դեպքում Վարագը պարտավոր է՝

(ա) Համատեղ Ընկերությունում Ստարի բաժնեմասը գնել բաժնետոմսերի անվանական գնով, և

(բ) Ստարին վերադարձնել մինչ վերոնշյալ գրավոր պահանջի թվականը Ստարի կողմից երկրաբանական ուսումնասիրությունների համար ծախսված գումարի 70 տոկոսը:

(10) Ստարը պատրաստ է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և ընդերքօգտագործման բոլոր աշխատանքները կատարել շրջակա միջավայրի պաշտպանության և բնապահպանության մասին ՀՀ օրենսդրության համաձայն:

(11) Ստարն իր առաջարկը պայմանավորում է նրանով, որ Վարագն ապահովի ՀՀ պետության պարտավորվածությունը հետևյալի կապակցությամբ՝

(ա) Ի նկատի ունենալով, որ ճշգրտված տեղանքում կարող են դեռևս մնացած լինել չվասագերծված ականներ՝ ականագերծել ընդերքօգտագործման համար անհրաժեշտ ամբողջ տարածքը,

- (բ) Երաշխավորել Ստարի իրավունքը՝ այս ծրագրի իրագործման արդյունքում Ստարին հասանելի գումարների փոխանցումն արտերկիր, արտարժույթի ոչ ավելի պակաս բարենպաստ գնով, քան այն, որ առկա է այս ծրագրի կապակցությամբ ստորագրվելիք պայմանագրի թվականին, և
- (գ) Երաշխավորել, որ մինչև 7-րդ ենթաբաժնում նախատեսված ժամանակաշրջանի ավարտը չի ավելանալու Ստարի նկատմամբ կիրառելի հարկային պարտավորությունները:
- (դ) Երաշխավորել, որ մինչև 7-րդ ենթաբաժնում նախատեսված ժամանակաշրջանի ավարտը չի արգելվելու ոսկու հանքանյութի արդյունահանումը, խտանյութի արտադրությունն ու վաճառքը օտարերկրյա գնորդներին:

9- Ստարի առաջարկը ստանալուց հետո կողմերը հանդիպում են 2016 թվականի նոյեմբեր 30-ին: Բանակցությունների արդյունքում Վարագը ընդունում է Ստարի բոլոր առաջարկներն ու պայմանները բացառությամբ հետևյալի, որոնց մասով Ստարը ներկայացնում է իր պահանջները

- (1) Ստարի առաջարկի 2-րդ ենթաբաժնի կապակցությամբ՝
 - (ա) Ստարի բաժնեմասը Համատեղ Ընկերության մեջ կլինի 60, իսկ Վարագինը՝ 40 տոկոս,
 - (բ) Ստարը կֆինանսավորի Վարագի բաժնեմասի գումարը, որը կավելանա այն գումարին, որ պետք է Ստարին վերադարձվի Ստարի առաջարկի 7-րդ մասնաբաժնի համաձայն:
- (2) Ստարի առաջարկի 6-րդ ենթաբաժնի մեջ նախատեսված 10 տոկոս գործակալական վարձավճարը կիջեցվի 7.5 տոկոսի:
- (3) Եթե Ստարն իր պայմանագրային պարտականությունները պատշաճ կերպով չկատարի, այն Վարագի գրավոր պահանջի դեպքում պարտավոր կլինի Համատեղ Ընկերության մեջ իր բաժնեմասը Վարագին վաճառել անվանական գնով:

10- Առաջարկի պայմանների մասին համաձայնության գալուց հետո կողմերը ամբողջացված գրավոր ծրագիրն ու առաջարկը միասնաբար հանձնում են Նախարարության 2016-ի դեկտեմբեր 5-ին:

11- 2016 թվականի դեկտեմբեր 15-ին Նախարարությունը Վարագին ու Ստարին հասցեագրված նամակով իր սկզբունքային համաձայնությունն է տալիս ներկայացված առաջարկ-ծրագրին, սակայն իր վերջնական համաձայնությունը պայմանավորում է նրանով, որ՝

- (1) Բոլոր դիմումները երկրաբանական ուսումնասիրություններ և, հետագայում, ընդերքօգտագործման թույլտվություն ստանալու համար պետք է ներկայացվեն կողմերի ներկայացրած ծրագրում նախատեսված Համատեղ Ընկերության կողմից,
- (2) Կողմերը պարտավորություն ստանձնեն Համատեղ Ընկերության միջոցով ու հաշվին հանքավայրի տեղանքում աշխատանքների կատարման համար անհրաժեշտ յուրաքանչյուր կտրված ծառի փոխարեն տնկել երկու ծառ,
- (3) Ստարը իր հաշվին բարեկարգի և ասֆալտապատի մայրուղուց մինչև հանքավայրի մեկ կիլոմետր հեռավորության վրա գտնվող երեք գյուղերը տանող ճանապարհները,
- (6) Կողմերը պարտավորություն ստանձնեն հանքավայրում տարվող աշխատանքների համար անհրաժեշտ ոչ մասնագիտացված աշխատանքների համար մարդկային ռեսուրսների առկա գն երեսուն տոկոսը ապահովել նշյալ երեք գյուղերի բնակչությունից,
- (7) Կողմերը համաձայնվեն ընդերքօգտագործման իրավունքի («**Ընդերքօգտագործման Արտոնագիր**») տրամադրման դիմաց ՀՀ կառավարությանը վճարել ռոյալթի՝ որը պետք է

հաշվարկվի և վճարվի գործող օրենսդրությանը համապատասխան և օրենսդրությամբ
Նախատեսված ժամկետներում,

- (8) Տրվելու դեպքում, Ընդերքօգտագործման Արտոնագիրը կտրվի 20 տարի ժամկետով՝
սկսած Արտոնագրի տրման պահից:

12- Նույն նամակով Նախարարությունն ավելացնում է, որ նամակում նշված պայմաններն
ընդունելու դեպքում Նախարարությունը պատրաստ է ապահովելու, որ ՀՀ համապատասխան
պետական մարմինների կողմից Ստարին տրվեն իր պահանջված երաշխիքները. այն է՝

- (ա) Ապահովել ընդերքօգտագործմա համար անհրաժեշտ ամբողջ տարածքի
ականագերծումը,
- (բ) Երաշխավորել Ստարի իրավունքը՝ այս ծրագրի իրագործման արդյունքում Ստարին
հասանելի գումարների փոխանցումն արտերկիր, արտարժույթի ոչ ավելի պակաս
Նպաստավոր գևով քան այն, որ առկա է այս ծրագրի կապակցությամբ
ստորագրվելիք պայմանագրի թվականին, և
- (գ) Երաշխավորել, որ մինչև Ստարի առաջարկի 7-րդ ենթաբաժնում նախատեսված
ժամանակաշրջանի ավարտը չի ավելանալու Ստարինկատմամբ կիրառելի հարկային
պարտավորությունները:
- (դ) Երաշխավորել, որ մինչև Ստարի առաջարկի 7-րդ ենթաբաժնում նախատեսված
ժամանակաշրջանի ավարտը չի արգելվելու ոսկու հանքանյութի արդյունահանումը և
խտանյութի արտադրությունն ու վաճառքը օտարերկրյա գևորդներին:

13- Վարագն ու Ստարը 22 դեկտեմբեր 2016 թվակիր միասնական նամակով իրենց համաձայնու-
թյունն են տալիս Նախարարության պայմաններին, որից հետո 2016 թվականի դեկտեմբեր 27-ն
Ստարի և Վարագի միջև ստորագրվում է պայմանագիր («**Պայմանագիր**»), որի մեջ ներառվում
են կողմերի միջև համաձայնեցված 8-րդ և 9-րդ պարբերության մեջ նշված բոլոր պայմաններն ու
11-րդ պարբերության մեջ նշված Նախարարության բոլոր պահանջները: Ի հավելումս վերոնշյալի՝
Պայմանագրի մեջ ներառված են նաև հետևյալ հոդվածները՝

*«Յոթված 20. Ստարը պարտականություն ունի Պայմանագրի կնքման պահից սկսած մինչև
մեկ տարի կատարել բոլոր երկրաբանական ուսումնասիրությունները իր հաշվին ապահովելով
այդ աշխատանքների համար անհրաժեշտ ֆինանսավորումը, սարքավորումներն ու մասնագետ
և ոչ մասնագետ մարդկային ռեսուրսները, համաձայն Ստարի կողմից ներկայացված ծրագրի, որ
կցված է այս Պայմանագրին որպես Հավելված թիվ 2:*

*Յոթված 21. Եթե մինչև հոդված 20-ում նշված ժամանակաշրջանի ավարտը կհայտնագործվի
Ստարի համար բավարար ծավալով ոսկու պաշար, հանքի շահագործման տեխնիկական բոլոր
մանրամասներն ու ծրագիրը կկազմվի կողմերի փոխհամաձայնությամբ և Նախարարության
հաստատումն ստանալուց հետո կկցվի այս Պայմանագրին դառնալով դրա անբաժանելի մասը:*

*Յոթված 22. Ստարը պարտավոր է իր կողմից կատարված բոլոր ներդրումների և ծախսերին
առնչվող բոլոր փաստաթղթերը հանձնել Համատեղ Ընկերությանը՝ առանձնացված հաշվառման
Նպատակով: Այս փաստաթղթերը կօգտագործվեն Պայմանագրի պայմաններին համաձայն
Ստարին վերադարձվելիք գումարները որոշելու համար: Վարագն իրավունք ունի ցանկացած
պահի իր լիազորված ներկայացուցիչների միջոցով ստուգել նշյալ փաստաթղթերն ու
գրանցումները:*

*Յոթված 37. Եթե հետազոտությունների արդյունքում գտնվի ոսկու պաշար, որի չափը սակայն
ընդունելի չէ Ստարի համար, Ստարի կողմից գրավոր պահանջի դեպքում Վարագը պարտավոր
է՝*

(ա) Ստարի՝ Համատեղ Ընկերության բաժնեմասը գնել բաժնեմասերի անվանական գնով, և

(բ) Ստարին վերադարձնել մինչ վերոնշյալ գրավոր պահանջի թվականը Ստարի կողմից ընդերքի ուսումնասիրությունների համար ծախսված գումարի 60 տոկոսը:»

Հոդված 38. Ստարն, իր պայմանագրային պարտականությունները պատշաճ կերպով չկատարելու դեպքում, պարտավոր է Վարագի գրավոր պահանջի դեպքում Համատեղ Ընկերության իր բաժնեմասը Վարագին վաճառել անվանական գնով:»

Հոդված 39. Այս Պայմանագիրը կարող է լուծվել հետևյալ դեպքերում՝

(ա) Կողմերից յուրաքանչյուրի միակողմանի պահանջով, եթե մյուս կողմը կատարում է իր պայմանագրին հիմնական պարտավորություններից որևէ մեկի խախտում, և ստանալով չխախտող կողմի գրավոր պահանջը տվյալ խախտումը վերացնելու մասին՝ չի վերացնում այն մյուս կողմի գրությունը ստանալուց 10 օրվա ընթացքում:

(բ) Հոդված 37-ի կամ 38-ի պայմաններում Ստարի բաժնեմասը Վարագին փոխանցվելու դեպքում,

(գ) Ֆորս Մաժորի դեպքում, եթե այն չի վերանում առաջանալու պահից մինչև 30 օր:»

Հոդված 40. Այս Պայմանագիրը ենթակա է Հայաստանի Հանրապետության իրավունքին և այս Պայմանագրի, դրա մեկնաբանության և դրա կապակցությամբ կամ դրանից բխած բոլոր վեճերի ու տարաձայնությունների լուծման ու կարգավորման համար կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:»

Հոդված 41. Այս Պայմանագրից կամ դրա կապակցությամբ, ընդ որում դրա վավերության մասին առաջացած բոլոր վեճերը փոխհամաձայնությամբ չլուծվելու դեպքում վերջնականորեն լուծվում են արբիտրաժով:

(1) Արբիտրաժն անց է կացվում երեք Արբիտրներից բաղկացած տրիբունալի («**Տրիբունալ**») միջոցով: Կողմերից յուրաքանչյուրը ընտրում է մեկ արբիտր, և կողմերի նշանակած Արբիտրներն ընտրում են Նախագահող Արբիտրին:

(2) Արբիտրաժի վայրն է՝ քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետություն:

(3) Արբիտրաժի լեզուն է հայերենը:

(4) Արբիտրաժի ընթացակարգային կանոններն են՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը:

Արբիտրաժի վճիռը՝ կայացած մեծամասնության ձայնով, վերջնական է և ենթակա հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես նաև արտերկրում համաձայն տվյալ երկրի արբիտրաժային վճիռների հարկադիր կատարումն ապահովող օրենսդրության:»

14- Նույն օրը կողմերը ստորագրում են Համատեղ Ընկերության՝ «Ստվար» ՍՊԸ-ի («**Ստվար**») հիմնադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը, որը գրանցվում է 2016 թվականի դեկտեմբեր 28-ին:

15- 2016 թվականի դեկտեմբեր 29-ին կողմերը միասնական նամակով Նախարարությանն են հանձնում ստորագրված Պայմանագրի պատճեն և Ստվարի գրանցման մասին փաստաթղթերը:

16- 2017 թվականի հունվարի 16-ին Ստվարը, հղում անելով Վարագի և Ստարի 29 դեկտեմբեր 2016 թվականի նամակին, պաշտոնապես դիմում է Նախարարության նախապես ճշգրտված տարածքի երկրաբանական ուսումնասիրությունների թույլտվություն ստանալու համար («**Երկրաբանական Ուսումնասիրությունների Թույլտվություն**»): Նամակում նաև նշվում է,

որ ուսումնասիրությունների արդյունքում օգտակար հանածոների հայտնագործման դեպքում այն հետազայում պաշտոնապես կրիմի նաև ընդերքօգտագործման թույլտվություն ստանալու համար:

17- 2017 թվականի հունվարի 27-ին Նախարարությունը Ստվարին է հանձնում Երկրաբանական Ուսումնասիրությունների Թույլտվությունը և Ստարին ուղղված նամակին կցում Ստարի պահանջած երաշխիքներն ապահովող ՀՀ պետական համապատասխան մարմինների կողմից տրված փաստաթղթերը: Երկրաբանական Ուսումնասիրությունների Թույլտվություն մեջ, ի թիվս այլ պայմանների, նշված է նաև, որ հետազայում ընդերքօգտագործման թույլտվություն տրվելու դեպքում ընդերքօգտագործման ժամկետը լինելու է քսան (20) տարի և ռոյալթին՝ ըստ ՀՀ օրենսդրության նախատեսված չափի և սահմանված ժամկետներում: Թույլտվությանը կցված է նաև երկրաբանական ուսումնասիրությունների համար հատկացված տարածքի քարտեզը:

18- Ստանալով Երկրաբանական Ուսումնասիրությունների Թույլտվությունն ու ավարտելով անհրաժեշտ նախնական աշխատանքները՝ 2017 թվականի ապրիլի 17-ին սկսվում են ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները որոնք շարունակվում են մինչև 2017 թվականի հոկտեմբերի 30-ը:

19- Ուսումնասիրության աշխատանքների համար Ստարը ապահովում է բոլոր մասնագիտացված տեխնիկան ու սարքավորումները և թվով 10 օտարերկրացի մասնագետներ՝ մինչև 2017 թվականի հոկտեմբեր 30-ը տարված աշխատանքների համար ծախսելով ընդդամենը 3 միլիոն ԱՄՆ դոլար, որի կապակցությամբ բոլոր փաստաթղթերն այն հանձնում է Ստվարին Պայմանագրի 21-րդ հոդվածում նախատեսված առանձնացված հաշվառման համար:

20- Երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքները սկսելու թվականից մինչև սեպտեմբերի 30-ը, Ստարը երեք անգամ, իր 15 մայիս, 16 հունիս և 19 օգոստոս 2017 նամակներով հասցեագրված Ստվարին, պատճեն Նախարարությանն ու Վարազին, տեղեկացնում է, որ չեն կատարվել ականագերծման աշխատանքները, որի պատճառով հնարավոր չէ առավել ընդլայնել երկրաբանական ուսումնասիրությունների տարածքը, քանի որ առկա է ականների պայթելու հավանական վտանգ: Ստարն իր այս նամակներին ոչ մի պատասխան չի ստանում և ականագերծման ոչ մի աշխատանք այդպես էլ չի իրականանում:

21- Երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքները մինչև 2017 թվականի հոկտեմբերի 19-ը բացահայտում են ոսկու հանքանյութի արդյունահանման համար շահավետ հանքավայր: 2017-ի հոկտեմբերի 23-ին Ստարը Էլեկտրոնային գրությամբ արդյունքների մասին տեղեկացնում է Ստվարին և Վարազին, պատճեն Նախարարության, ավելացնելով, որ թեև գտնված ոսկու պաշարը ամբողջովին չի արդարացնում իր սպասելիքները սակայն ընդերքօգտագործման համար հատկացված տարածքում կան ոսկու պաշարներ, որոնք հնարավոր է առավել մանրամասն ուսումնասիրել նշված տարածքի ամբողջական ականագերծման դեպքում:

22- 2017 թվականի հոկտեմբերի 15-ին Վարազը ստանում է Էլեկտրոնային նամակ Ավստրալիական Գոլդ Մայնինգ ընկերությունից, որ հետաքրքրություն է հայտնում Վարազի հետ համատեղ ընդերքօգտագործման ծրագրեր իրականացնելու համար, եթե Վարազը իր ուսումնասիրությունների արդյունքում հայտնագործել է տարածք, ուր հնարավոր է որ առկա լինել ոսկու կամ պղնձի շահավետ պաշարներ:

23- 2017 թվականի հոկտեմբերի 28-ին հանքավայրից դեպի հարևան գյուղերից մեկը գնացող Ստարի մեքենայից 5 մետր հեռավորության վրա պայթում է չվասագերծված ական: Արդյունքում վնասվում է Ստարի մեքենան, և վիրավորվում են վարորդն ու մեքենայի մեջ գտնվող երեք ուղևորները:

24- Ստարը իր 30 հոկտեմբեր 2017 թվակիր նամակով տեղեկացնում է Ստվարին, պատճեն Վարազին ու Նախարարությանը, որ ինքը դադարեցնում է բոլոր աշխատանքները և չի վերսկսելու դրանք մինչև տեղանքի ամբողջական ականագերծումը:

25- Վարագի և Ստարի միջև բանակցություններն աշխատանքները վերսկսելու համար ապարդյուն են անցնում: Վարագը բանակցությունների ընթացքում նշում է, որ ստացել է հավանական համագործակցության առաջարկ այլ ընկերությունից և հակքը չի թողնի առանց շահագործման: Բանակցությունների ավարտին Ստարը վերջնականորեն մերժում է աշխատանքները վերսկսել մինչև չվստահանա, որ երկրաբանական ուսումնասիրությունների և ընդերքագործման համար հատկացված ամբողջ տարածքը և դեպի մայրուղին ու հարևան գյուղերը տանող ճանապարհները ամբողջովին ականազերծված են:

26- Ստվարն իր 23 նոյեմբեր 2017 նամակով տեղեկացնում է Նախարարությանը Ստարի կողմից աշխատանքների դադարեցման մասին՝ նաև ավելացնելով, որ Վարագի և Ստարի միջև բանակցություններն աշխատանքները վերսկսելու համար անարդյունք են մնացել:

27- Ստանալով Ստվարի նամակը՝ Նախարարությունը Ստվարին հասցեագրված 15 դեկտեմբեր 2017 թվակիր իր նամակով, պատճեն Վարագին ու Ստարին, տեղեկացնում է, որ եթե Ստարը մինչև 2017 թվականի դեկտեմբերի 22-ը գրավոր նամակով չստանձնի հանձնառություն՝ ընդերքի ուսումնասիրության աշխատանքը 2018-ի գարնանը վերսկսելու մասին, ինքը պատրաստվում է դադարեցնել Ստվարին տված թույլտվությունը:

28- Ստարը ստանալով Նախարարության նամակի պատճեն, իր 20 դեկտեմբեր 2017 թվակիր նամակով հասցեագրված Նախարարության, պատճեն՝ Վարագին ու Ստվարին, կրկնում է իր պահանջը ավելացնելով, որ ինքը առնվազն երեք անգամ գրավոր դիմել է Ստվարին, պատճեն նաև Նախարարության՝ պահանջելով ապահովել տեղանքի ականազերծումը, սակայն իր նամակները մնացել են անպատասխան և ոչ մի ականազերծման աշխատանք չի իրականացվել ո՛չ Նախարարության և ոչ էլ Ստվարի կողմից: Հաշվի առնելով նշվածը, ինքը կվերսկսի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները, միայն երբ վստահանա, որ իր նամակում նշած վայրն ամբողջությամբ ականազերծված է:

29- Ստանալով Ստարի վերոնշյալ նամակի պատճենը՝ Վարագը 27 դեկտեմբեր 2017 թվակիր նամակով հղում անելով Պայմանագրի 38-րդ հոդվածին պահանջում է Ստարից Վարագին փոխանցել Ստվարում ունեցած իր 60 տոկոս կազմող բաժնեմասն անվանական գնով: Վարագն իր պահանջը հիմնավորում է նրանով որ՝

- (1) Ստարը, դադարեցնելով երկրաբանական ուսումնասիրական աշխատանքները, թույլ է տվել Պայմանագրում նախատեսված իր պարտականությունների էական խախտում, և
- (2) Բոլոր դեպքերում հայտնաբերված ոսկու պաշարը, ըստ Ստարի իսկ գրության, չի բավարարում Ստարի սպասելիքները:

Վարագն իր գրության մեջ ավելացնում է, որ Ստարի արարքը վտանգել է Ստվարին տրված երկրաբանական Ուսումնասիրությունների թույլտվությունը՝ դրանով նաև վտանգելով Վարագի ակնկալած շահույթը, որի պատճառով և 1,000,000 ԱՄՆ դոլարի վնասի հատուցում է պահանջում:

30- Ստարը ստանալով Վարագի նամակը իր 10 հունվար 2018 նամակով պատասխանում է, որ՝

- (1) Ստարը չի դադարեցրել ուսումնասիրական աշխատանքները այլ ժամանակավորապես կասեցրել է դրանք մինչև ապահով աշխատելու հնարավորությունն ստեղծվի,
- (2) Աշխատանքի կասեցման պատճառը ՀՀ կառավարության պայմանագրային խախտումն է՝ ականների վնասազերծման կապակցությամբ ,
- (3) Ստարն իր նամակի մեջ նշել է, որ նույն տարածքում առկա են ոսկու հավելյալ պաշարներ, որոնց առավել ուսումնասիրության հնարավորությունն ինքը չի ունեցել չվնասազերծված ականների առկայության պատճառով,
- (4) Բոլոր դեպքերում ոսկու պաշարի քանակը Ստարի տեսակետից բավարար չլինելն անգամ իրավունք չի տալիս Վարագին Ստարից պահանջել իր բաժնեմասի փոխանցումը Վարագին,

(5) Ստարը չի խախտել Պայմանագրի պայմաններից և ոչ մեկը և Վարագի պահանջի իրական պատճառն այն է, որ Ստարի տարած աշխատանքների արդյունքում հայտնագործվել է ոսկու պաշար, և որ Ստարը տեղյակ է, որ Ավստրալիական Գոլդ Մայնինգ ընկերությունը Ստարից ավելի նպաստավոր պայմաններ է առաջարկել Վարագին նույն ծրագրի իրագործման համար:

Առ այդ, Ստարը չի պատրաստվում Վարագին փոխանցել Ստվարում ունեցած իր բաժնեմասը և պահանջում է Ստարի համար ապահովել ապահով պայմաններ երկրաբանական ուսումնասիրությունները շարունակելու համար և պատրաստ է այդ կապակցությամբ բանակցել Վարագի հետ:

31- Վարագն իր 18 հունվար 2018 թվակիր նամակով պատասխանում է Ստարին, որ ինքը բանակցության ոչ մի պատճառ չի տեսնում, և եթե Ստարը մինչև 2018 թվականի հունվարի 30-ը Վարագին չփոխանցի Ստվարում ունեցած իր ամբողջ բաժնեմասը, ապա այն կդիմի արբիտրաժին բաժնեմասի փոխանցման և Ստարին գրած իր նամակում նշված վնասի հատուցման համար:

32- Ստարը մինչև 2018 թվականի հունվարի 30-ը Վարագին չի փոխանցում Ստվարում ունեցած իր բաժնեմասը:

33- Վարագը իր 5 փետրվար 2018 թվակիր նամակով տեղեկացնում է Ստարին, որ ինքը պատրաստվում է սկսել արբիտրաժի գործընթացը՝ մինևույն նամակում նաև նշանակելով իր Արբիտրին:

34- Ստարը Վարագի նամակին պատասխանում է իր 12 փետրվար 2018 գրությամբ, նշանակում է իր Արբիտրին՝ ավելացնելով, որ այս դեպքում ինքը ևս պատրաստ է հակընդդեմ հայց ներկայացնել արբիտրաժին:

35- Կողմերի նշանակած արբիտրները հանդիպում են 21 փետրվար 2018-ին և ընտրում Նախագահող արբիտրին: Նախագահող արբիտրը կողմերին տեղեկացնում է Տրիբունալի ձևավորված լինելու մասին:

36- Հայցի ու պատասխանի փոխանակումից հետո, արբիտրաժի նիստը կայանում է 2018 թվականի մարտի 24 և 25-ին: